



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԱՄԱԿՈՐ ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ 2015թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## Սիտեի՝ համաքաղաքացիներ.

Հավատարիմ մնալով ձևավորված ավանդույթին՝ Ձեզ են ներկայացնում իմ կողմից 2015 թվականի ընթացքում իրականացված պատգամավորական գործունեության արդյունքները: Ինչպես նախկինում, այնպես էլ այս տարի, մշտական կապ պահպանելով թիվ 30 ընտրատարածքի բնակիչների հետ, շարունակել եմ ընդունելությունների կազմակերպումը՝ Վանաձոր քաղաքում մշտական հիմունքներով գործող իմ պատգամավորական գրասենյակում, ինչպես նաև ստացել բազմաթիվ գրավոր դիմումներ և առաջարկություններ: Հետևողականորեն բարձրացրել եմ քաղաքացիներից ստացված հարցերն ու առաջարկությունները 33 պետական կառավարման մարմինների առջև ինչպես հարգողարարի ամբիոնի, այնպես էլ օգտագործելով տարբեր քաղաքական հարթակներ: Իրականացրել եմ բազմաթիվ հանդիպումներ թիվ 30 ընտրատարածքի համայնքներում, Վանաձոր քաղաքի բակերում, ուսումնական և այլ հաստատություններում, հասարակական կազմակերպություններում՝ նպատակ ունենալով մշտապես անձամբ իրազեկվել տարածքում առկա խնդիրներին և հնարավորինս աջակցել յուրաքանչյուր քաղաքացու՝ իմ լիազորությունների շրջանակներում: Հարկ է նկատել, որ իմ պատգամավորական գործունեությունը բնավ չի սահմանափակվել թիվ 30 ընտրատարածքի խնդիրներով. ակտիվորեն մասնակցել եմ համապետական բոլոր խնդիրների քննարկմանն ու դրանք լուծման ուղղությամբ 33 Ազգային ժողովում իրականացվող աշխատանքներին:

Ստորև, ըստ ոլորտների, ներկայացված են իմ գործունեության որոշ արդյունքներ: Նշված հիմնախնդիրները բարձրացվել են ինչպես առանձին պատգամավորական հարցումների, գրությունների, այնպես էլ հայտարարությունների, էլուրների ու հարցերի միջոցով՝ Կառավարության հետ հարց ու պատասխանի կամ առանձին նախագծերի ներկայացման ու քննարկման ժամանակ:

### Սոցիալ-տնտեսական ոլորտ

- Խորհրդարանում էլեկտրաէներգիայի թանկացման վերաբերյալ քննարկումների ժամանակ էլույթ եմ ունեցել այն մասին, որ ՀԵՑ-ի վնասներն իրականում ոչ թե սակավաչափության կամ ատոմակայանի սխալ ժամանակահատվածում կանգնեցնելու պատճառով են առաջանում, այլ կոռումպացիան կառավարման մարմինների կողմից ընկերությունն անորակ կառավարելու և թալանելու հետևանք են: Նշել եմ նաև, որ այդ գործողությունները հանցագործություն են, որոնց մասին հաղորդումները պետք է ուղարկվեն դատախազություն, գողոնը պետք է վերադարձվի իր օրինական տերերին, իսկ բնակչությունը չպետք է հատուցի ՀԵՑ-ի կրած «վնասներ» համար: Ընդգծել եմ, որ անթույլատրելի եմ համարում այն հանգամանքը, որ ՀԵՑ անորակ կառավարման և կոռուպցիայի արդյունքում գոյացած վնասների հատուցումը կատարվի բնակչության հաշվին՝ էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացնելու միջոցով: Մասնակցել եմ էլեկտրաէներգիայի սակագին բարձրացման դեմ բողոքի ցույցերին՝ «Կենդանի պատ» կազմելով ցուցարարների և իրավապահների միջև:

- «Շրջանառության հարկի մասին» 33 օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկելիս բարձրացրել եմ հարկային ոլորտում իրավական կանխատեսելիության չափազանց ցածր մակարդակի հարցը՝ դրանից բխող բացասական հետևանքներով, որոնց թվում են թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրումների կրճատումը, փոքր և միջին բիզնեսի ցուցանիշների անկումը՝ առաջարկելով հարկային օրենսդրությունը մշակելիս իրականացնել մասնագիտական լուրջ ուսումնասիրություններ հարկերին առնչվող օրենքներն առնվազն ամեն տարի չփոփոխելու համար:

- Անդրադարձել եմ փոխարժեքի տատանումների հետևանքով քաղաքացիներին տրված վարկերի իրական տոկոսարդյույթի բարձրացման խնդիրն և առաջարկել վերանայել այդ տոկոսները, որպեսզի վարկառուներից ավել գումարներ չզանձվի և այդ մասով իրավիճակը կայունանա:

- 33 տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2015թ. տարեկան գործունեության ծրագիրը քննարկելիս արտահայտել եմ այն մտահոգությունս, որ երկրում բիզնես միջավայրի բարելավում տեղի չի ունենում, խոչորներն ավելի են խոչարում, իսկ փոքր ու միջին սուբյեկտները դաշտում երկար չեն կարողանում գործունեություն ծավալել:

- Հաշտարարի ինստիտուտի ներդրումը քննարկելիս աջակցել եմ նախագծի մշակմանը, դրա ընդունմանը՝ կարևորելով այն հանգամանքը, որ 33 դատական համակարգի գերբեռնվածության հետևանքով գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտումների հետևանքով տուժած քաղաքացիների թիվն այժմ չափազանց մեծ է, իսկ այս ինստիտուտի ներդրումը կարող է բերել այդ իրավիճակի բարելավմանը:

- Ալցիզային հարկի մասին օրենքը քննարկելիս հարց եմ բարձրացրել բեռնափոխ, դիզ. վառելիքի և մյուս ապրանքատեսակների թանկացման հետևանքով նաև մյուս ապրանքների թանկացման մեծ հավանականության մասին, ինչն իր հերթին բերելու է նաև որոշակի տեսակի գործունեության շահութաբերության կրճատման, ապրանքների շրջանառության առանց այդ էլ կրկնակի նվազեցման պայմաններում էլ ավելի պակասելու և աշխատատեղերի քանակի կրճատմանը, ինչը նաև ԵՏՄ մտնելու հետևանք է: Նույն նախագծի առնչությամբ էլույթ եմ ունեցել՝ խոսելով բնակչությունից ամեն տարի ավելացվող հարկերի հաշվին բյուջեի հավաքագրման, սակայն կառավարության կողմից անհարկի և ուժեղացված ծախսերի չվճարման և անզամ դրանց ավելացման փաստի վերաբերյալ:

- «Հայֆոստ» ՓԲ ընկերությունը մասնավորեցման ցուցակում ընդգրկելու հարցը քննարկելիս էլույթ եմ ունեցել այդ և նման (մասնավորապես՝ երկաթուղին, բաշխիչ ցանցերը և այլն) ընկերությունները մասնավորեցնելու հետևանքով կառավարման և դրանց ընդհանրապես աշխատանքի որակի կտրուկ անկման վերաբերյալ: Նույն հարցի քննարկման ժամանակ



կրկին բարձրացրել եմ «Հայֆոստ» բաժանմունքների և աշխատակիցների թվի կրճատման խնդիրը:

- Խորհրդարանում հայտարարությունների ժամին խոսել եմ Վանաձորի քիմարմի չմարված աշխատավարձերի և գործարանի այլ խնդիրների մասին, այդ թվում նաև հարկադիր կատարման փուլ հասած ու չկատարված վճիռների ու անպատասխան մնացած բողոքի ակցիաների մասին՝ պահանջելով ինչպես որ «Նաիրիտ» ընկերության, այնպես էլ քիմարմի դեպքում կառավարությունը գործուն քայլեր ձեռնարկի գործարանի խնդիրները լուծելու համար: Հարցը նաև բարձրացրել եմ 33 նախագահի մակարդակով և արդյունքում, դեկտեմբերի 15-ից, սկսվել է աշխատավարձային պարտքերի վճարումը:

- Շարունակական կերպով բարձրացրել եմ ՀեՆԱՀ հնալայանում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու կարգում ծեր ու վատառողջ անձանց համար առաջնահերթություն սահմանելու անհրաժեշտությունը, միաժամանակ այս հարցով բոլոր առանձին նամակների վերաբերյալ դիմել եմ Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարություն:

- Գրության դիմել եմ 33 ֆինանսների նախարարին՝ բարձրացնելով քաղաքացիների բողոքն այն մասին, որ 22երի վրա փակցվող ալցիզային պիտակները երեխաները կուլ են տալիս, ինչի հետևանքները կարող են անդառնալի լինել՝ առաջարկելով վերանայել դրանց չափերն ու ավելի ամուր փակցնել դրանք ապրանքին:

- Բազմաթիվ քաղաքացիների խնդրանքին ընդառաջ՝ դիմել եմ Վանաձորի քաղաքապետին և 33 առողջապահության նախարարին՝ պահանջելով Վանաձորի շուկայում վերականգնել սանիտարական վիճակը, մասնավորապես՝ աղբախցի ու սննդի և այլ ապրանքների վաճառքի կետերն առանձնացնել ու հեռացնել միմյանցից: Քաղաքացիների պահանջը բավարարվել է:

- Վանաձորիցիների բազմաթիվ դիմումների հիման վրա՝ դիմել եմ Վանաձորի քաղաքապետին՝ պահանջելով վերականգնել Վանաձորի գիշերային լուսավորությունը մինչև նախկինում գործող ժամը: Լուսավորությունը մի քանի օր անց վերականգնվել է:

- Գրության դիմել եմ վարչապետին՝ առաջարկելով երկրապահների համար սահմանել արտոնյալ պայմաններով վարկատեսակ՝ հատկապես նրանց համար, ովքեր զբաղվում են գյուղատնտեսական գործունեությամբ: Նշված հարցը ներկայումս

քննարկման առարկա է:

### Պատահական ոլորտ

- Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի քննարկման ժամանակ առաջարկել եմ, որպեսզի խոչունակումների համար դատապարտված անձանց վրա համաներում չտարածվի, ինչպես նաև նրանք զրկվեն որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից՝ մեցիդիվը բացառելու նպատակով, միաժամանակ խոսել եմ այն մասին, որ իրականում խոչունակումների համար որևէ մեկը մինչ այժմ չի դատապարտվել, քանի որ նման անձից հովանավորվում են մինչև անգամ պետական մակարդակով:

- Բարձրացրել եմ նաև այն հարցը, որ որպես Ազգային կանխարգելման մեխանիզմ (ԱԿՄ), 33 Մարդու իրավունքների պաշտպանը չունի բավականաչափ ռեսուրսներ խոչունակումների դեմ արդյունավետ պայքարի համար և որ խոչունակումների ենթարկված անձից Հայաստանում չեն ստանում վնասների լիարժեք հատուցում:

- Քրեական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող՝ 33 Կենտրոնական բանկի կողմից մշակված օրենքի նախագիծը քննարկելիս էլույթ եմ ունեցել դրա հակասահմանադրականության և առհասարակ հակաիրավականության մասին՝ շեշտելով, որ անձը չի կարող քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկվել պայմանագրային պարտավորությունների չկատարման համար: Նախագիծը հանվել է խորհրդարանի նիստերի օրականագից և այժմ գտնվում է լիամշակման փուլում:

### Սեփականության պաշտպանության և աշխատանքային ոլորտ

- Խորհրդարանում բազմիցս քննարկումներին անդրադարձել եմ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար սահմանված տուգանքներին՝ խոսելով դրանց վերաբերյալ օրենսդրության անհարկի խստության և ոչ իրավաչափ սանկցիաների մասին:

- Էլույթ եմ ունեցել «Հայփոստում» իրականացվող տարածքային կենտրոնների և աշխատակիցների թվաքանակի կրճատումների մասին՝ ներկայացնելով դրա բացասական հետևանքները գործազրկության ավելացման և բնակչության համար ավելորդ անհարմարություններ ստեղծելու առումով: Խոսել եմ նաև այն մասին, որ արտասահմանյան ներդրումով աշխատող բազմաթիվ ընկերություններ, որոնք թվում են «Հարավկովկասյան երկաթուղին», «Բիլայնը», «Գազպրոմ Արմենիան», հարյուրավոր անձանց

